ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 6, 1964 Общественные науки

Էմիլ Թուման

ԱՐԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԵՐԿԱ ԷՏԱՊԸ*

Իրադարձություններն Իրաքում և Սիրիայում, ինչպես նաև միջարաբական հարաբերություններն Եգիպտոսի, Իրաքի և Սիրիայի միջև գրավել են Մերձավոր Արևելքի ու ամբողջ աշխարհի քաղաքական դիտորդների ուշադրությունը։ Այս իրադարձությունները, բնականաբար, իրար հետ կապված են և կարևոր են ոչ միայն նշված երեք երկրների ժողովուրդների, այլ նաև ամբողջ այդ շրջանի համար։

Սակայն ստեղծված իրադրության ամենաբնորոշ հատկանիշը նրա անկայունությունն է։ Թե՛ Իրաքում և թե՛ Սիրիայում գոյություն չունի համեմատաբար կայուն վիճակ և դրությունը հղի է պայթյունով։ Դա, ամենայն հավանականությամբ, կազդի արաբական երեք երկրների՝ Եգիպտոսի, Իրաքի և Սիրիայի հարաբերությունների վրա։ Հարցի այս կողմը պարզաբանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջին ժամանակների դեպքերը։

Անցած տարվա փետրվարի 8-ին աջ ուժերն արյունոտ հեղաշրջում կատարեցին Իրաքում։ Մարտի 8-ին նույն բնույթի հեղաշրջում տեղի ունեցավ Սիրիայում, իսկ 1963 թ. ապրիլի 17-ին Կահիրեում Եգիպտոսի, Իրաքի և Սիրիայի միջև ստորագրվեց եռակողմ համաձայնագիր Արաբական ֆեդերացիա հիմնելու մասին։ Բայց Կահիրեի համաձայնագրից հազիվ մեկ ամիս անց Սիրիայում և Իրաքում տեղի ունեցան կիսահեղաշրջումներ, իսկ ֆեդերացիայի վերաբերյալ համաձայնագիրն էլ մոռացության տրվեց։

Այդ պատճառով ճիշտ կլինի ենթադրել, որ ներկա ժամանակաշրջանն ընդհանուր առմամբ անցման ժամանակաշրջան է։

Ժամանակակից իրադրությունը հասկանալու և նրա հեռանկարները կանխատեսելու համար անհրաժեշտ է դնահատել ներկա պատմական էտապը, որ տարում են այս երեք երկրները և ամբողջ արաբական աշխարհը։ Սակայն դրա համար հարկավոր է դիմել ոչ հեռավոր անցյալին։ Այն ցույց է տալիս, որ հաղթանակը ֆաշիզմի դեմ երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում, Սովետական Միության աճող ազդեցությունը միջազգային գործերում, իմպերիալիզմի թուլացումը և ժողովրդական ուժերի աճը ընդհանուր առմամբ (թեև յուրօրինակ՝ ասիական) նպաստավոր պայմաններ ստեղծեցին անկախության համար մղվող ազգային-ազատագրական շարժման ուժեղացման համար։

Ազգային-ազատագրական շարժումն առավել զարգացած արաբական երկրներում տարբեր հետևանքներ ունեցավ։ Սիրիայում և Լիբանանում, որտեղ ազգային ճակատը, բուրժուազիայի և ֆեոդալական տարրերի ավանդական ղեկավարության ներքո գլխավորեց շարժումը, 1945 թ. ձեռք բերվեց անկախություն և օտար զորքերը հարկադրված եղան հեռանալ այդ երկրներից։

---

* *Էմիլ Թուման Իսրայելի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ և «Ալ-Իթթիհադ» թերթի խմբագիրն է։ Սույն հոդվածը նա գրել է մեր ամսագրի համար և ուղարկել մեզ 1963 թվականի աշնանը։ Հոդվածը թարգմանված է անգլերենից։*

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

Եգիպտոսում ավանդական բուրժուական ղեկավարությունը, որն ուժեղ կապեր ուներ ֆեոդալիզմի հետ (կազմակերպչորեն այդ բանն արտահայտվում էր Վաֆդ կուսակցության մեջ) չկարողացավ գտնվել խնդրի բարձրության վրա։ Դա հանգեցրեց այն բանին, որ բանվորների և ուսանողների կոմիտեն 1946 թ. ղեկավարեց բրիտանական օկուպացման դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումը։ Բանվորների և ուսանողների մասսայական շարժումները (գործադուլներ և ցույցեր) ձախողեցին անգլիացիների և ռեակցիոներների փորձերը՝ ամրապնդել Եգիպտոսի կախվածությունը Մեծ Բրիտանիայից։ Սակայն չլուծվեց ազգային գլխավոր պահանջը անգլիացիների էվակուացիան։ Տրադիցիոն բուրժուական ավանդական ղեկավարությունը տատանվեց, վախ զգալով բանվորների և ուսանողների մասսայական գործողություններից։ Ռեակցիոն ուժերը և իմպերիալիզմի գործակալները դաժանորեն ճնշեցին այդ շարժումները։

Իրաքում ալիքը իր բարձրագույն կետին հասավ 1948 թ. հունվարին։ Այն ժամանակ ազգային դեմոկրատական ուժերը և կոմունիստական կուսակցությունը, որը շատ ակտիվ կերպով էր մասնակցում պայքարին, ղեկավարեցին ազգային մասսայական շարժումը և ձախողեցին Իրաքի վրին նոր ստրկացուցիչ պայմանագիր (այսպես կոչված Պորտսմուտի պայմանագիրը) փաթաթելու անգլիական փորձերը։ Այդ շարժումը, որը տապալեց կառավարությանը և փախուստի մատնեց բազմաթիվ ռեակցիոն տարրերի, չլուծեց լրիվ ազգային անկախություն ձեռք բերելու խնդիրը։ Ավանդական ղեկավարությունը ռեակցիայի հետ կոմպրոմիսի դիմեց և իմպերիալիզմի հին գործակալներին որոշ ժամանակ անց, երբ իշխանության գլուխ էր կանգնած «չեղոք» կառավարությունը, հաջողվեց կրկին իրենց ձեռքը վերցնելու կառավարության դեկը։

Արաբական մյուս երկրներում ազգային-ազատագրական շարժումն այդպիսի ուժով չզարգացավ։ Հյուսիսային Աֆրիկայում՝ Ալժիրում, Թունիսում և Մարոկկոյում նա ուժեր էր հավաքում։

Արաբական միասնության հարցը այս ժամանակաշրջանում իր արտահայտությունը գտավ արաբական լիգայի ստեղծման մեջ։ Սակայն այդ լիգան դարձավ գործիք սկզբում բրիտանական իմպերիալիստների ձեռքում, իսկ հետագայում, երբ ամերիկյան իմպերիալիզմը ներթափանցեց Մերձավոր Արևելք և արաբական երկրներ, նա վերածվեց պայքարի արենայի բրիտանական ու ամերիկյան իմպերիալիզմի միջև։

Այսպիսով, արաբական միասնությունը, որը առաջին համաշխարհային պատերազմի վերջերից սկսած աճող գործոն էր, թուլացավ և նույնիսկ ենթարկվեց իմպերիալիզմի շահերին։

Արաբական ազգային դեմոկրատական հեղափոխության այս էտապը բնութագրվում է հետևյալ երեք գծերով. առաջին, նրա խնդիրն էր քաղաքական ազատագրումը։ Ազգային դեմոկրատական հեղափոխության սոցիալական բովանդակությունը պարզ չէր և միայն կոմունիստներն էին, որ ընդգծում էին նրա հիմնական նպատակադրումները։ Երկրորդ, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների անհամաչափ զարգացման հետևանքով պայքարի կենտրոնը գտնվում էր առավել զարգացած երկրներում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Իրաքում և Լիբանանում։ Երրորդ, արդյունաբերական բուրժուազիան դեռևս գտնվում էր երկրորդ պլանում և ասպարեզում իշխում էր տրադիցիոն բուրժուական ղեկավարությունը դաշնակցած ֆեոդալական տար-

բերի հետ։ Միևնույն ժամանակ ժողովրդական ուժերը, մասնավորապես բանվորները և նրանց ավանգարդը՝ կոմունիստները, դառնում էին ինքնուրույն ուժ ազգային-ազատագրական պայքարում։

Արաբական ազգային վերելքի ալիքը կարելի է ասել իր գագաթնակետին հասավ 1948 թ.։ Դրանից հետո բուրժուական տրադիցիոն ղեկավարության ընդհանուր տենդենցը, նույնիսկ Սիրիայում և Լիբանանում, որտեղ այդ ղեկավարությունն ակնհայտ հակաիմպերիալիստական էր, դարձավ կոմպրոմիսը իմպերիալիզմի հետ։

Այդ տենդենցը, որն արտահայտվեց համակոմունիստական կամպանիայի ավանդական ղեկավարության միջազգային և ներքին քաղաքականության մեջ, առաջացավ այդ ղեկավարության դասակարգային վախից, որը ի դեմս ժողովրդական ուժերի տեսնում էր սպառնալիք իր դասակարգային շահերին։ Այն առաջացավ նաև բուրժուազիայի այն հույսից, թե համագործակցությունը իմպերիալիզմի հետ կնպաստի նրա շահույթների ավելացմանը։ Դա սառը պատերազմի սանձազերծման սկիզբն էր, երբ իմպերիալիստներին հաջողվեց նոր ստեղծված ազգային պետություններում խաղալ հակասովետական և հակակոմունիստական խրտվիլակի դեր։ Այս ժամանակաշրջանը, որն ընդգրկեց 1948—1954 թթ., արաբական առավել զարգացած երկրներին չբերեց որևէ կայունացում։

Քաղաքական ճգնաժամի մեջ ներգրավվեցին Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը և Հորդանանը։ Եգիպտոսում, մինչև 1952 թ. հուլիսի 23-ը, ազատ սպաների կողմից կատարված հեղաշրջումը մեկ կառավարությունը փոխարինում էր մյուսով։ Բայց նույնիսկ այս հեղաշրջումը կայունացում չբերեց։ Պայքարը իշխանության համար գեներալ Մոհամեդ Նագիբի և գնդապետ Արդել Նասերի միջև ոչ այլ ինչ էր, եթե ոչ իշխանության շարունակվող ճգնաժամի արտահայտություն։ Սիրիայում մինչև 1954 թ. մեկ ռազմական հեղաշրջում հաջորդում էր մյուսին։ Լիբանանում և Հորդանանում շարունակվում էր տիրել անկայուն վիճակ և տեղի էին ունենում սպանություններ քաղաքական հողի վրա։ Իրաքում պետական հեղաշրջում կատարելու փորձերը և ժողովրդական դժգոհությունը խարխլում էին պրոիմպերիալիստական միապետական ռեժիմը։

Այս ճգնաժամերի պատճառները միանգամայն պարզ են՝ ժողովրդական մասսաների և պրոիմպերիալիստական ռեժիմների միջև եղած հիմնական հակասությունները, սոցիալական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը, որն արտահայտվում էր աճող դասակարգային պայքարի և դյուղացիական հուզումների մեջ, և վերջապես, ազգային բուրժուազիայի քննադատական դիրքը, բուրժուազիա, որը խեղդվում էր իմպերիալիստական մրցակցությունից։ Ահա այդ ճգնաժամերի հիմնական գործոնները։

Միջազգային իրադրությունը, որը 1948 թ. սկսած դառնում էր անբարենպաստ իմպերիալիստների համար, ավելի հստակացավ 1954 թ. և նժարը թեքվեց հօգուտ ժողովրդական մասսաների։

Չինական ռևոլյուցիայի հաջողությանը հաջորդեց Ամերիկայի պարտությունը Կորեայում և Ֆրանսիայի պարտությունը Հնդկաչինում՝ 1954 թ.։ Սոցիալիստական հեղափոխությունը ստեղծեց սոցիալիզմի համաշխարհային սիստեմ՝ Սովետական Միության գլխավորությամբ, որն այդ ժամանակ արդեն բուժել էր երկրորդ համաշխարհային պատերազմի վերքերը և անշեղորեն առաջ էր ընթանում բոլոր բնագավառներում։ Այսպիսով, թե՛ միջազգային և թե՛ ներ-

ին իրադրությունները նպաստում էին արաբական ազգային դեմոկրատական հեղափոխության նոր ալիքի բարձրացմանը։ Կարելի է ասել, որ 1954 թ. շրջադարձային կետ հանդիսացավ արաբական ազգային-ազատագրական շարժման մեջ։ Սիրիայում տապալվեց Շիշակլիի բռնապետությունը և ստեղծվեց հակիմպերիալիստական բուրժուական դեմոկրատական կառավարություն, որին պաշտպանում էր իսկական ազգային ճակատը։ Այդ նույն թվականին Ալժիրի ժողովուրդը հեղափոխություն սկսեց հանուն ազգային ազատագրության։ Ազգային-ազատագրական ալիքը, որ տևեց 1954—1958 թթ., ականատես եղավ Մարոկկոյի, Թունիսի և Լիբիայի անկախությանը, Եգիպտոսի կողմից իմպերիալիստական կապանքները փշրելուն և անկախ դրական չեզոքության քաղաքականության որդեգրմանը, Իրաքի հեղափոխությանը, որը տապալեց պրոիմպերիալիստական միապետությունը և երկիրը փրկեց Բաղդատի դաշինքից և, վերջապես, Հորդանանի դեմոկրատական ազգային ճակատի տրիումֆին։

Արաբական ազգային դեմոկրատական հեղափոխության նոր էտապը առավել զարգացած արաբական երկրներում և հատկապես Եգիպտոսում, Սիրիայում ու Իրաքում, իր հիմնական գծերով տարբերվում էր նախորդ էտապներից։ Այդ տարբերությունները հետևյալներն են.

Առաջին. նրա ղեկավարությունը գտնվում էր ազգային բուրժուազիայի, ըստ էության, արդյունաբերական բուրժուազիայի ձեռքում։ Երկրորդ. նրա բովանդակությունը թե՛ քաղաքական և թե՛ սոցիալական էր։ Նրա նպատակը չէր միայն քաղաքական անկախություն ձեռք բերել, այլ ձգտում էր նաև լիկվիդացնել արաբական երկրների տնտեսական կախվածությունը իմպերիալիստական երկրներից, նրանց կանգնեցնելով տնտեսական անկախ զարգացման ուղու վրա։ Այս երկու գծերն էլ կանխորոշեցին հողային ռեֆորմի կիրառումը, որը, ըստ բուրժուազիայի տեսակետի, պետք է կոտրեր ֆեոդալիզմի քաղաքական ուժը և թուլացներ նրա տնտեսական տիրապետությունը գյուղում։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի և մասնավորապես Սովետական Միության աճող ուժն ու նրա բարեկամական օժանդակությունն ազգային նոր պետություններին, արաբական երկրների համար հնարավոր դարձրին քաղաքականապես ու տնտեսապես խզել կապերն իմպերիալիզմի հետ, միջազգային գործերում վարել անկախ չեզոք քաղաքականություն, իսկ երկրի ներսում՝ տնտեսական անկախ զարգացման կուրս վերցնել։

Այդ ժամանակաշրջանի նվաճումները շատ են։ Դրանցից հատկանշական է, օրինակ, այն հակահարվածը, որ արաբական երկրները հասցրին պատմության անիվը շուռ տալու իմպերիալիստների փորձերին։ Եոյակ ագրեսիայի ձախողումը Եգիպտոսում 1956 թ., Սիրիայի դեմ ռազմական միջամտության տապալումը 1957 թ., «էյզենհաուերի դոկտրինայի» արագ մայրամուտը այս ժամանակաշրջանի կարևոր երևույթներն են։ Պակաս կարևոր չէին նաև նվաճումները տնտեսական բնագավառում։

Հատկանշական է, որ չնայած արաբական երկրների անհամաչափ զարգացմանը, առավել զարգացած երեք երկրներում տեղի ունեցող դեպքերը իրենց ազդեցությունն էին գործում ամբողջ արաբական ազգային-ազատագրական շարժումների վրա։ Այսպես, Մարոկկոյում և Թունիսում քաղաքական ստադիան արագորեն վերաճեց քաղաքական սոցիալական ստադիայի։ Այս զարգացումն Ալժիրում ավելի ընդգծված բնույթ ընդունեց։ Ամենուր արաբական ազգային շարժման ընդհանուր բովանդակությունը միայն քաղաքական չէր։ Դա կրկին

հաստատվեց Եմենի օրինակով, որտեղ հեղափոխության խնդիրները չսահմանափակվեցին միայն քաղաքական անկախություն ձեռք բերելով, այլ ընդգրկեցին նաև սոցիալական հարցեր, ինչպես օրինակ, հողային ռեֆորմը։

Այսպիսի պայմաններում արաբական լիգան չկարողացավ ծառայել արաբական միասնության պատմական շարժմանը։

Արաբական միասնության ուղղությամբ առաջին քայլը եղավ Եգիպտոսի և Սիրիայի միավորումը 1958 թ. սկզբներին և Արաբական Միասնական Հանրապետության ստեղծումը։ Սակայն այդ միությունը, որ ողջունում էին արաբական երկրների ժողովուրդները, երկար կյանք չունեցավ, 1961 թ. սեպտեմբերին քայքայվեց։

Ինչո՞ւ այդպես պատահեց։

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հասկանալ այն դեպքերը, որոնք հաջորդեցին 1954—1958 թթ. արաբական ազգային դեմոկրատական հեղափոխության մեծ վերելքին։ Այդ վերելքի հաջողությունները, որոնք ձեռք բերվեցին ամբողջ ժողովրդի պայքարի շնորհիվ, պայքար, որ ղեկավարում էր ազգային ճակատը, քաղաքական իշխանությունը հանձնեցին ազգային բուրժուազիային։ Ազգային բուրժուազիան ցանկանալով միայն ինքը օգտվել անկախության և տնտեսական զարգացման պտուղներից, չէր ուզում կենսագործել ազգային դեմոկրատական հեղափոխության խնդիրները, որոնց նպատակն էր անցկացնել խորը սոցիալական բարեփոխումներ։ Ազգային բուրժուազիան նույնիսկ դավաճանեց իր իսկ կողմից ընդունած հողային ռեֆորմ անցկացնելու վերաբերյալ օրենքին, վախենալով ժողովրդական ուժերից, որոնք հենվում էին այս ռեֆորմների անցկացման վրա։ Ազգային բուրժուազիան կատաղի հակակոմունիստական կամպանիա սկսեց։ Հակակոմունիստական պայքարի աղդանշանը տվեց Արաբական Միացյալ Հանրապետության պրեզիդենտը 1958 թ. վերջերին և նրան անմիջապես հետևեց Իրաքի Հանրապետության ղեկավարը, թեև մեկ տարի էլ դեռ չէր անցել հուլիսի 14-ի հեղափոխությունից։

Հակակոմունիզմը ճնշման և տեռորի իր միջոցառումներով ուժեղանում էր Իրաքում և Արաբական Միացյալ Հանրապետությունում դասակարգային պայքարի սրման համեմատ։ Ազգային բուրժուազիայի ղեկավարության համար հակակոմունիզմը նշանակում էր վերացնել այն ալտերնատիվը, որ կարող էր լուծել աղքատության ու թշվառության դարավոր պրոբլեմը։ Այդ պատճառով էլ ազգային բուրժուազիայի ղեկավարությունը օբյեկտիվորեն հակվում էր կոմպրոմիսների տեղական ռեակցիայի և իմպերիալիզմի հետ։

Այդ նույն ժամանակ իմպերիալիզմը նեոկոլոնիալիզմի մեթոդներով ամեն կերպ աշխատում էր ներթափանցել անկախություն ձեռք բերած այս երկրները։ Արաբական երկրներում՝ գտնվող նավթային մոնոպոլիաներն իրենց լայն կապերով շատ հարմար գործիք էին այդ նպատակի համար։

Դեռ ավելին. այս երկրների ղեկավարությունը տնտեսության զարգացման հարցում, չէր ցանկանում հենվել Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների վրա, վախենալով, որ սոցիալիստական երկրների բարեկամական օգնությունը կուժեղացնի նրանց ազդեցությունը ժողովրդական մասսաների վրա։ Եվ որպեսզի կանխի սոցիալիզմի ազդեցության ուժեղացումն ու կոմունիզմի փոխարեն մեկ այլ ալտերնատիվ առաջադրի, ազգային բուր-

ժուազիայի ղեկավարությունը բարձրացրեց «սոցիալիզմի» լոզունգը։ Սակայն նրանց «սոցիալիզմը» անկարող եղավ լուծելու քաղաքի և գյուղի աշխատավորական մասսաների պրոբլեմները։ Նույնիսկ Եգիպտոսում, որտեղ սոցիալական բարեփոխումները, ինչպես օրինակ, արդյունաբերական որոշ ճյուղերի ազգայնացումը, ավելի լայն էին, քան որևէ այլ արաբական երկրում, գործազրկության և աղքատության պրոբլեմները շատ հեռու էին իրենց լուծումից։

Այս էտապը, որը սկսվեց 1959 թ. բնորոշվում է ազգային բուրժուազիայի երկակի բնույթով. նրա անվճռականությամբ իմպերիալիզմի դեմ մղվող պայքարում, իմպերիալիզմի հետ նրա կոմպրոմիսներով, թեև հակասությունները ազգային բուրժուազիայի և իմպերիալիզմի միջև ակտիվ են, երբեմն նույնիսկ շատ սուր։ Այս երկակի բնույթով պետք է բացատրել այն հանգամանքը, որ ազգային բուրժուազիայի ղեկավարությունը բարեկամական հարաբերություններ է պաշտպանում սոցիալիստական համագործակցության հետ, միջազգային կյանքում պրոգրեսիվ դեր է խաղում, պաշտպանելով զինաթափման, միջուկային զենքի փորձարկումները դադարեցնելու պահանջները, նպաստում է խաղաղության գործի ամրապնդմանը և օժանդակում ազգային հակագաղութային հեղափոխություններին, մասնավորապես Աֆրիկայում։

Իրադարձությունները ցույց են տալիս արաբական ազգային բուրժուազիայի երկու սպեցիֆիկ կողմեր։

Առաջին. երբեմն դժվար է որոշել, թե նրա մոտ ո՞րն է տիրապետողը՝ ռեակցիոնը, թե պրոգրեսիվը։ Երկրորդ. չնայած, որ այդ երեք երկրներում սոցիալական հարաբերությունների ճնշման ներքո արաբական ազգային բուրժուազիայի ընդհանուր տենդենցը կոմպրոմիսն է տեղական ռեակցիայի և իմպերիալիզմի հետ, ազգային բուրժուազիայի տարբեր խմբեր տարբեր կերպով են վերաբերվում ներքին և արտաքին զանազան իրադարձություններին և ըստ այնմ էլ փոխում իրենց դիրքը։

Սրանով է բացատրվում, թե ինչու, օրինակ, Սիրիայի ազգային բուրժուազիան 1958 թ. ձգտում էր օրգանական միության Եգիպտոսի հետ, բայց հետագայում հիասթափվեց այդ միությունից և 1961 թ. սեպտեմբերին բանակի օգնությամբ կատարեց հեղաշրջում այդ միությունը քանդելու համար։ Սրանով է նաև բացատրվում, թե ինչու Սիրիայի ազգային բուրժուազիայի փոքրաթիվ խմբեր Եգիպտոսի հետ լոյալ են մնացել Սիրիայի միությանը, մինչդեռ մյուս խմբերը երբեք չեն արդարացրել այդ միությունը։ Այնուամենայնիվ, Եգիպտոսի և Սիրիայի միության քայքայումը արդյունք էր այն բանի, որ դավաճանեցին արաբական ազգային դեմոկրատական ռևոլյուցիայի խնդիրներին, ավելի հիշտ, ազգային բուրժուազիայի ղեկավարությունը մինչև վերջ չկենսագործեց դեմոկրատական հակաիմպերիալիստական հեղափոխության նպատակները։

Արաբական Միացյալ Հանրապետության ղեկավարության կոմպրոմիսը իմպերիալիզմի հետ, որը 1961 թ. հանգեցրեց մերձեցման նրա և իմպերիալիզմի գործակալներ՝ Հորդանանի Հուսեյն թագավորի և Սաուդյան Արաբիայի Սաուդ թագավորի միջև, հողային ռեֆորմին դավաճանելը, նրա բռնատիրական, հակադեմոկրատական մեթոդները, անտարբերությունը բանվորների արդարացի պահանջների հանդեպ և աճող հակասությունը Եգիպտոսի ուժեղ բուրժուազիայի և Սիրիայի ավելի թույլ բուրժուազիայի միջև, ահա այս բոլորը հանգեցրին Եգիպտոսի և Սիրիայի միության քայքայմանը։

Արաբական միասնությունը, որը հանդիսանում է ազատագրության համար մղվող արաբական ազգային շարժման օրգանական զարգացումը, կարող է ձեռք բերվել միայն, եթե արաբական ազգային դեմոկրատական հեղափոխության նպատակները կենսագործվեն։ Ավելի կոնկրետ. դրան կարելի է հասնել, եթե նրա բովանդակությունը կազմի հակաիմպերիալիզմը՝ արտաքին քաղաքականության մեջ և դեմոկրատիզմը այդ բառի ամենալայն իմաստով՝ ներքին քաղաքականության բնագավառում։

* * *

Թեև 1959 թ. հետո ընկած ժամանակաշրջանը տատանումների ժամանակաշրջան էր և Եգիպտոսի, Սիրիայի ու Իրաքի ազգային բուրժուազիան հակված էր կոմպրոմիսի տեղական ռեակցիայի և իմպերիալիզմի հետ, այնուամենայնիվ, արաբական երկրների անհամաչափ զարգացումը հանգեցրեց երկու կարևոր արդյունքի։ Առաջին. Ալժիրյան հեղափոխությունը 1962 թ. ավարտվեց հաղթանակով և Եմենի հեղափոխությունը հիմնեց հանրապետություն Արաբական թերակղզու ամենահին և անսասան թվացող ֆեոդալական պետություններից մեկում։

Երկրորդ. դա դեմոկրատական ուժերի վերելքն էր Սիրիայում և Իրաքում։ Սիրիայում դեմոկրատական ուժերը առաջ էին ընթանում, չնայած նրանց ճնշելու ռեակցիայի բոլոր փորձերին, իսկ Իրաքում դեմոկրատական ուժերը պայքարի էին դուրս գալիս, չնայած Կասրմի ռեժիմի սարսափներին։ Երկու երկրներում էլ կոմունիստական կուսակցությունները հաջողություններ էին ձեռք բերում և փորձում հիմնել ազգային ճակատ, որը կկարողանար կենսագործել ազգային դեմոկրատական հեղափոխության խնդիրները և ձախողել իմպերիալիզմի փորձերը նեոկոլոնիալիզմի միջոցով կրկին վերադառնալ իրենց հին դիրքերին։

Սրանով է բացատրվում, թե ինչու երկու երկրներում էլ ազգային բուրժուազիայի կառավարությունները, թեև տեղյակ էին, որ ազգային բուրժուազիայի որոշ խմբեր պետական հեղաշրջում են նախապատրաստում, վճռական միջոցների չդիմեցին այս դավադրությունները կանխելու համար։ Միայն մեկ ուժ կար, որ կարող էր ձախողել այդ պետական հեղաշրջումները և այդ ուժը ժողովուրդն էր՝ կոմունիստների գլխավորությամբ։ Սակայն երկու երկրներում էլ ազգային բուրժուազիան հրաժարվեց ժողովրդական ուժերին գործելու հնարավորություն տալու գաղափարից։ Երկու երկրներում էլ, հատկապես Իրաքում, կառավարությունները շարունակում էին իրենց հակակոմունիստական քաղաքականությունը։ Միաժամանակ նրանք ռեակցիոն ուժերին և նույնիսկ իմպերիալիստական գործակալներին (ինչպես «մուսուլման եղբայրներ» Սիրիայում) կարևոր դիրքեր հանձնեցին մինիստրություններում և վարչական օրգաններում։ Դասակարգային աճող հակասությունները և ժողովրդական մասսաների ուժեղացող պայքարը Իրաքում և Սիրիայում հանգեցրին երկու պետական հեղաշրջումների։ Երկու հեղաշրջումներն էլ իշխանությունը հանձնեցին ազգային բուրժուական ուժերի և ռեակցիոն տարրերի խմբավորմանը։ Թե՛ Իրաքում և թե՛ Սիրիայում կարևոր դիրքերը բաաս կուսակցության ձեռքումն են։ Բաաս կուսակցությունը, որը այսպես կոչված «սոցիալիստական», մանրբուրժուական կուսակցություն է, լավ ծառայեց ազգային բուրժուազիային կոմունիստների և ժողովրդական ուժերի դեմ մղված պայքարում։ Իրաքում,

որտեղ հակակոմունիզմը հանգեցրեց արյունահեղ ճնշումների, բաաս կուսակցությունը ծառայեց բուրժուազիայի վատթարագույն խմբերին և իմպերիալիզմի հետ դաշինքի մեջ գտնվող ներքին ռեակցիային։

Իմպերիալիստների համար տրամաբանական էր երկու հեղաշրջումներն էլ պաշտպանել, քանի որ նրանք հույս ունեին այդ ուղիով ոչնչացնել արաբական ազգային-ազատագրական շարժման ամենակայուն ուժը՝ կոմունիստներին։ Սակայն կոմունիստների հալածանքը և հակադեմոկրատական տեռորը ցույց տվեցին, որ երկու կառավարություններն էլ մեկուսացված են ժողովրդական ուժերից և վախենում են նրանցից։ Այդ մեկուսացման աստիճանը պարզ կերպով երևաց արաբական միասնության վերաբերյալ Եգիպտոսի, Սիրիայի և Իրաքի բանակցությունների ժամանակ։ Պրոնասերական լիբանանյան ժուռնալիստ Սայիդ Ֆրեհան գրելով այդ բանակցությունների մասին նշում է, որ Իրաքի պատվիրակությունը համառորեն մերժում էր համաձայնվել երեք երկրների ռազմական ուժերի միավորման առաջարկին։ Նա ավելացնում է, որ Իրաքի պատվիրակությունն իր այդ համառությունը բացատրում էր նրանով, որ բաասը «ճակատագրական պայքարի մեջ է մտել կոմունիստական տարրերի հետ և դա անհրաժեշտ է դարձնում, որ բանակը մնա կառավարող պարտիայի (բաասի) իշխանության ներքո»։ Եթե սա որևէ նշանակություն ունի, ապա դա կայանում է հետևյալում։ Չնայած արյունալի սպանդին, կոմունիստական կուսակցությունն Իրաքում շարունակում է մնալ կարևոր, եթե ոչ վճռական ուժ այն պայքարում, որ Իրաքի ժողովուրդը մղում է ռեակցիոն, արյունարբու կառավարողների դեմ։

Երկու կառավարությունների մեկուսացման պատճառով էր, որ Սիրիայի և Իրաքի ղեկավարները բարձրացրին արաբական միասնության լոզունգը, հույս ունենալով դաշինքի մեջ մտնել եգիպտական բուրժուազիայի հետ և խաղալ միասնության ձգտող արաբական ժողովուրդների զգացմունքների վրա և այդ ուղիով ամրապնդել իրենց ուժերը։

Ամերիկյան իմպերիալիստները տեսք ընդունեցին, թե պաշտպանում են այդ միասնությունը և կպաշտպանեին, եթե նա զրկվեր իր հիմնական բովանդակությունից՝ հակաիմպերիալիստական ու դեմոկրատական։ Այդպիսի «միությունը» կծառայեր նրանց շահերին, ինչպես արաբական լիգան, նախորդ էտապում։

Թեև ապրիլի 17-ին ստորագրվեց համաձայնագիր, որը անհրաժեշտ քայլերի սկիզբը հանդիսացավ արաբական ֆեդերացիա ստեղծելու ուղղությամբ, այնուամենայնիվ, ոչինչ չարվեց այդ ֆեդերացիան ստեղծելու համար։ Ավելին. Սիրիայում և Իրաքում բաասականները կիսահեղաշրջում կատարեցին, վերացնելով նասերականներին, որոնք երկու երկրներում էլ իրենցից ներկայացնում են ազգային բուրժուազիայի փոքրամասնական խմբեր։ Վերջիններս ձգտում են օրգանական միության Եգիպտոսի հետ, կարծելով, որ դա հարցի լավագույն լուծումն է։

Բաասականներն այժմ նոր պայքարի մեջ են մտել նասերականների հետ։ Միության մասին նրանց գաղափարը ոչ միայն ֆեդերացիան է՝ ըստ ձևի, այլև ձևական՝ ըստ բովանդակության։ Այդ ուղիով նրանք պաշտպանում են իրենց սեփական շահերը և ազգային բուրժուազիայի լայն շրջանների շահերը, որոնք վախենում են, թե միության դեպքում իրենք կուլ կգնան, որովհետև այնտեղ

տիրապետող է լինելու ավելի ուժեղ և ավելի կազմակերպված եգիպտական բուրժուազիան։

Այդ դեպքում ինչպիսին են հեռանկարները։

Դժվար է կանխատեսել դեպքերի զարգացումն օր առ օր այս անկայուն իրադրության պայմաններում, երբ բասականներն ու նասերականները կարճատև մեղրամսից հետո ցեխ են շպրտում իրար երեսի։ Բայց կարելի է կանխագծել ազգային դեմոկրատական հեղափոխության ներկա էտապի ընդհանուր գծերը։ Հիմնական գիծն այն է, որ ընդհանուր հակաիմպերիալիստական պայքարում նշանակալի չափով աճել է սոցիալական պահանջների տեսակարար կշիռը։ Կապիտալիզմը չի կարող լուծել այս երկրների դարավոր պրոբլեմները և ազգային բուրժուազիան գիտե, որ ժողովուրդը հասկանում է այդ բանը։ Ահա թե ինչու ազգային բուրժուազիայի ղեկավարությունն առաջ քաշեց «սոցիալիզմի» լոզունգը։ Ազգային բուրժուազիան ի վիճակի չէ մինչև վերջ հասցնել ազգային դեմոկրատական հեղափոխության պահանջները։ Այդ պահանջները ունեն հրամայական բնույթ և չեն կարող անտեսվել թե արտաքին և թե ներքին հարցերում։ Այդ պատճառով էլ ազգային բուրժուազիան այս երկրներում չի կարողանա ստեղծել կայուն կառավարություններ։ Դա նշանակում է, որ ազգային դեմոկրատական հեղափոխության պահանջները պետք է կենսագործի բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի վրա հիմնված ազգային ճակատը, որի մեջ մտնում է նաև իմպերիալիստական բուրժուազիան։ Թե՛ Սիրիայում և թե՛ Իրաքում այդպիսի ճակատի ստեղծումը, որը կոմունիստների գլխավորությամբ կղեկավարի բանվոր դասակարգը, ոչ թե հիպոթեզային է, այլ միանգամայն ռեալ։ Իրաքի բասականների վախը և նրանց ցանկությունը բանակը իրենց ձեռքում պահել կոմունիստների դեմ ճակատագրական պատերազմ մղելու համար, լրիվ կերպով հաստատում է այդ բանը։

Այնուհետև վերջին տարիների զարգացումը ցույց է տալիս, որ ազգային բուրժուազիայի տարբեր խմբեր հաճախակի մի դիրքից մյուսն են անցնում։ Այսպես, օրինակ, բաաս կուսակցությունը, որ 1958 թ. պաշտպանում էր Սիրիայի և Եգիպտոսի օրգանական միավորումը, 1961 թ. պաշտպանեց այդ միասնության քանդումը, այնուհետև կրկին, 1962 թ. նա միության կոչ արեց։ Երբ նա անցավ իշխանության գլուխ սկսեց կոչ անել հանուն ֆեդերացիայի, իսկ այժմ փաստորեն հրաժարվում է նրանից։

Նույնը կարելի է ասել նաև արաբական միասնության վերաբերյալ, որը հիմա ավելի օրգանական կերպով է կապվում արաբական ազգային դեմոկրատական հեղափոխությանը։ Արաբական միասնությանը կարելի է հասնել եթե այն հիմնվի դեմոկրատիզմի և հակաիմպերիալիզմի սկզբունքների վրա։

Այս բոլոր դեպքերը, հասկանալի է, դատարկ տարածության մեջ տեղի չեն ունենում։ Միջազգային իրադրությունն, անշուշտ, իր ազդեցությունը կունենա արաբական ազգային-ազատագրական շարժման հեռանկարների վրա։ Այդ են ապացուցում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անցած տարիները։ Միևնույն ժամանակ արաբական երկրների անհամաչափ զարգացումը, որով և, օրինակի համար, բացատրվում է հանրապետական հեղափոխությունը Եմենում, այն ժամանակ, երբ առավել զարգացած արաբական երկրները հակված էին կոմպրոմիսի իմպերիալիզմի հետ, անպայման կուժեղացնի ազգային-ազատագրական շարժումը ավելի թույլ զարգացած երկրներում, ինչպես Սաուդյան Արաբիայում։ Այդ շարժման հաջողությունն ավելի թույլ

զարգացած երկրներում իր հերթին կուժեղացնի հակասություններն առավել զարգացած երկրների ազգային բուրժուազիայի ղեկավարության և իմպերիալիզմի միջև։ Որպես ապացույց կարելի է վկայակոչել Եմենը։

Արաբական համերաշխության զարգացումը և արաբ ժողովուրդների ձգտումը արաբական միասնության, նույնպես կուժեղացնեն արաբական ազգային-ազատագրական շարժումները։ Այսպես, թեև համաձայնագիրը Եգիպտոսի, Սիրիայի և Իրաքի միջև ֆեդերացիա հիմնելու մասին սխալ էր և չուներ հակաիմպերիալիստական ու դեմոկրատական բովանդակություն, այնուամենայնիվ այն օբյեկտիվորեն օգնեց ազգային շարժումների ուժեղացմանը Հորդանանում 1963 թ. ապրիլին։ Այս ազգային շարժումը հակաիմպերիալիստական էր և նրա նպատակն էր Հորդանանի անկախության պաշտպանումը։

Իրադարձություններն Ալժիրում հանդիսանում են մեկ այլ օրինակ այն բանի, թե ինչպես դեպքերը արաբական աշխարհում ու Հյուսիսային Աֆրիկայում փոխադարձաբար կապված են և ազդում են միմյանց վրա։

Սակայն այս բոլորն անհրաժեշտ է դիտել արաբական երկրներում դասակարգային ուժերի տեղաբաշխման տեսանկյունից։

Դեպքերի զարգացումը արաբական երկրներում հետպատերազմյան ժամանակաշրջանում ապացուցում են մի բան. չնայած տեղատվություններին ու մակընթացություններին արաբական ազգային-ազատագրական շարժումը զարգանում է։ Ներկա էտապը այդ շարժման բարձրագույն էտապն է, որովհետև առավել զարգացած արաբական երկրներում հասունանում են պայմանները բանվոր դասակարգի կողմից այդ շարժումները ղեկավարելու համար։

Эмиль Тума

СОВРЕМЕННЫЙ ЭТАП АРАБСКОГО НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ

Резюме

Арабские страны ныне находятся в переходном периоде, и их развитие носит неравномерный характер.

Основная черта нынешней стадии народно-демократической революции—это рост социального содержания в общей антиимпериалистической борьбе. Капитализм не может разрешить вековые проблемы арабских стран и поэтому национальная буржуазия не может в этих странах создать устойчивые правительства. Это значит, что народно-демократический фронт, опирающийся на рабочий класс в союзе с крестьянами и включающий антиимпериалистическую буржуазию, должен будет провести требования народно-демократической революции.

Арабское национально-освободительное движение развивается несмотря на спады и подъемы. Современная стадия—более высокая ступень, т. к. в развитых арабских странах созревают все предпосылки для того, чтобы руководство борьбой перешло в руки рабочего класса.